

2. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ ՍՓՅՈՒԹՔՈՒՄ

(1963 թ. հունիս-դեկտեմբեր)

Լ ի Ր ա ճ ա ճ

Բեյրութում հոկտեմբեր ամսին կազմակերպվել է հայ մամուլի և հին դրամների ուղադրված ցուցահանդես: Հայկական թերթերի ու ամսագրերի հավաքողն է ուսուցիչ Ա. Տեր-Խաչատրյանը: Նա դեռևս 1961 թ. կազմակերպել էր նման մի ցուցահանդես և հրատարակել ուղեցույց: Այժմ Տեր-Խաչատրյանը հարստացրել է հավաքածուն, ցուցադրվող պարբերականների թիվը 260-ից հասցնելով 1050-ի: Նրան հաջողվել է ձեռք բերել «Ազգաբարձր», աշխարհի տարրեր երկրներում լույս տեսած այժմ հազվագյուտ պարբերականներ: Տեր-Խաչատրյանը դարձյալ հրատարակել է ուղեցույց: Նրա կարծիքով մինչև այժմ եղած հայ պարբերականների թիվը հասնում է 2600-ի: Ուղեցույցում զետեղված է նաև հայ լրագրության մատենագիտությունը և սփյուռքահայ ներկա մամուլի համառոտ ցուցակը:

Նույնքան հետաքրքրական է Ա. Տոնապետյանի հայկական դրամների հավաքածուն, որտեղ ընդգրկված են Արտաշեսյաններից մինչև Լուսինյանները ընկած ժամանակաշրջանի 2000-ից ավելի հայկական դրամներ: Տոնապետյանը ուսումնասիրել է գրամները, որոշել նրանց ժամանակը և կատարել գիտական դասակարգում:

(Մեր նշանաբանն է՝ հառաչ, Բեյրութ)

* * *

Բեյրութում առաջին անգամ հիմնվում է մշտական թատրոն, որը կրելու է «Լիրանանյան արդի թատրոն» անունը: Թատրոնում գործելու են արարական, ֆրանսիական և հայկական խմբեր: Հայկական խմբի ղեկավարող է նշանակված Պերճ Ֆազլյանը, որը ղեկավարել է լայն ճանաչում գտած «Վահրամ Փափագյուն» հայկական թատերախմբի:

(«Քուլիս», Ստամբուլ)

* * *

Լիրանանահայ ճանաչված երգչուհի Լուիզ Պապալյանը վերջերս Դիազգոյում, էդինբուրգում և Պալերմոյում հանդես է եկել Վերդիի «Ռիգելո» օպերայում: Դեզդեմոնայի դերերգով: Անգլիական և իտալական թերթերը մեծ գովեստով են խոսում երգչուհու արվեստի մասին:

(«Արաբ», Ալեքսանդրիա)

* * *

Նույնքան ամսին Բեյրութի «Ալեքս Սաապ» ցուցասրահում կազմակերպվել է ֆրանսահայ եկարիչ Զարեհ Մութաֆյանի գործերի ցուցահանդեսը: Նկարչի գործերից առանձնահատուկ ուշադրության արժանացան Հայաստանի մի քանի ընտանեկաններ, որոնք նա ստեղծել էր հայրենիք կատարած այցելության ժամանակ: Լիրանանի հեռուստատեսությունը կազմակերպել է Զ. Մութաֆյանի նկարների ցուցադրումը:

Նույն ամսին Բեյրութում կազմակերպվել է նաև Լիրանանահայ երիտասարդ շնորհալի նրկարիչ Հարություն Թորոսյանի նկարների ցուցահանդեսը: Նա մի քանի անգամ մասնակցել է Փարիզում կազմակերպված ցուցահանդեսներին և արժանացել մամուլի բարձր գնահատականներին:

(«Արաբ», Բեյրութ)

* * *

Բեյրութում մի քանի համերգներով հանդես է եկել վերջին տարիներս մեծ հռչակ ձեռք բերած ֆրանսահայ երիտասարդ էստրադային երգչուհի Ռոդի Արմենը (Հովհաննիսյան): Դաշնակա՜ար Ժ. Տեր-Խաչատրյանի նվագակցությամբ նա հայերեն և ֆրանսերեն լեզուներով կատարել է բազմաթիվ երգեր: Նրկու տարի է, որ Ռոդի Արմենի երգերի ձայնապնակները լայն ճանաչում են գտել Նվրուպայում: Նա համերգներ է տվել Գերմանիայում, Բելգիայում, մտադիր է մեկնել Թուրքիա, Կանադա և Սովետական Միություն:

(«Արաբ», Բեյրութ)

* * *

«Արաբ» թերթը տեղեկացնում է, որ Բեյրութի «Անի» տպարանում հրատարակվել է բանաստեղծ-երգիչ Հակոբ Ասատուրյանի «Կոմիտաս վարդապետ և հայ երգը» գիրքը, որտեղ ի մի են բերված հեղինակի մոտ երկու տասնյակ տարիների ընթացքում հրապարակած հոդվածները:

(«Արաբ», Բեյրութ)

* * *

Ամերիկահայ շնորհալի դաշնակահարուհի Լյուսի Իշխանյանը Հայաստան, Իրան և Իրաք այցելելուց հետո, համերգով հանդես է եկել

Քեյրութում: Արեւմտանվորոպական կոմպոզիտոր-
ների գործերից բացի, դաշնակահարուհին կա-
ռարել է նաև Ալ. Սպենդիարյանի, Ա. Խաչա-
տուրյանի և Ա. Բարաջանյանի ստեղծագործու-
թյունները:

(«Արարատ», Բեյրութ)

* * *

Հալեպի հայկական դպրոցներում արարե-
նի ուսուցիչ եղած ժամանակ Նիզար Խալիլին
սովորել էր հայոց լեզուն և հաղորդակից դար-
ձել հայ գրականությանը: Հ. Շիրազի «Խեչեզա-
րի և Սիամանթո» պոեմը թարգմանելուց հե-
տո, վերջերս Խալիլին արար ընթերցողին է
հանձնել Հակոբ Պարոնյանի անմահ «Մեծապա-
տիվ մուրացկաններ»-ը: Երբքը ձևավորել է
ճանաչված երգիծականարիչ Ալ. Սարուխանը:
Խալիլին հայ գրականությանից կատարել է
նաև մի շարք այլ թարգմանություններ և այժմ
շարունակում է իր այդ շնորհակալ աշխատան-

(«Զարթոնք», Բեյրութ)

* * *

Լույս է տեսել Մ. Ոսկերիչյանի «Ավերակ
տործվարույնը, Նոր Զեյթուն և հայրենական
տպավորություններ» գիրքը: Երբի առաջին մա-
սում տեղ են գտել հուշագրություններ հին Զեյ-
թունի մասին, դրվագներ Զեյթունի հերոսամար-
տերից, մի շարք անտիպ տեղեկություններ և
նյութեր: Երկրորդ մասում հեղինակը պատմում
է, Նոր Զեյթունի, Սովետական Հայաստանում
ստացած իր վառ տպավորությունների մասին:

(«Զարթոնք», Բեյրութ)

Ք ու լ ղ ա ռ ի ա

«Վառնայի ամառ» — այսպես է կոչվում Բուլ-
ղարիայի հանրապետական երգի ու պարի տրա-
դիցիոն սուներ: Այդ տոներն 1963 թ. մեծ հաջո-
ղությամբ մասնակցեցին նաև Վառնայի հայ-
կական երգի ու պարի անսամբլը և Սոֆիայի
հայկական երգչախումբը, որոնք մի քանի հա-
մերձներ տվեցին: Երկու կուլեկտիվներն էլ ար-
ժանացան պատվոգրերի:

(«Երևան», Սոֆիա)

* * *

«Երևան» միութայն Սոֆիայի մասնաճյուղը
կազմակերպեց «Արտասանության մրցում»:
Մրցմանը մասնակցեցին դպրոցականներ և շա-
փահասներ: Ժյուրին մրցանակներ շնորհեց ա-

ռավել հաջող հանդես եկածներին, որոնք ար-
տասանեցին Իսահակյանի, Չարենցի, Թուման-
յանի, Կապուտիկյանի, Վապցարովի և այլ բա-
նաստեղծների գործերից:

(«Երևան», Սոֆիա)

Ի ս ա լ ի ա

Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը
հավերժացնելու նպատակով Վենետիկի Մի-
թարյանները ծրագրել են Ս. Ղազարի Մատե-
նադարանի ձեռագրերի մանրանկարների շքեղ
հրատարակությունը, որն ունենալու է նաև
առաջարան և ուսումնասիրություն: Մատենա-
դարանն ունի Վանի, Տրապիզոնի, Հավուց Թա-
ռի, Հոռմկլայի, Գլաձորի, Սկեռայի, Տաթևի,
Սայահանի, Ղրիմի, Լվովի և Ստամբուլի հռչա-
կավոր վարպետների ոսկենկար գործերը: Հրա-
տարակության մեջ կատարվելու է ժամանակա-
շրջանների և նկարչական հոսանքների հստակ
բնութագրում, ընդգրկվելու են X—XVIII դարերի
ընթացքում ստեղծված գործերը: Մասնավորա-
պես, գրքի մեջ տեղ կգրավեն Կոստանդին Սկե-
ռացին, Իգնատիոս մանրանկարիչը, Թորոս Տա-
րոնցին, Սարգիս Պիծակը, Նաղաշը իրենց գոր-
ծերով և կենսագրականներով: Հրատարակու-
թյունը կատարվելու է չորս լեզուներով՝ հայե-
րեն, իտալերեն, անգլերեն և ֆրանսերեն:

(«Արարատ», Բեյրութ)

Ռ ու մ ի ն ի ա

Ռումիիայի «Էլեկտրեկորդ» երգապնակների
սուներ, օգտվելով հռչակավոր երգչուհի Զարուհի
Դոլուիսանյանի տված վերջին համերգից, եր-
գապնակների վրա ձայնագրել է նրա լավա-
գույն կատարումները, «Նոր կյանք» թերթը
նշում է, որ ռումին ունկնդիրների մոտ մեծ հա-
ջողություն են գտնում երգչուհու երգապնակ-
ները:

(«Նոր կյանք», Բուխարեստ)

Կ ա ն ա ռ ա

Բուլղարահայ «Երևան» թերթը հաղորդում է,
որ Կանադայի Մոնրեալ քաղաքում ընկվող
հայերը ձեռնարկել են «Բուրաստան» անունով
թերթի հրատարակումը:

(«Երևան», Սոֆիա)

Ֆ Ր ա ն ս ի ա

Հռչակավոր կինոդերասան և երգիչ Շարլ
Ազնաուրը Բրիջիտ Բարդոյի ընկերակցությամբ
եկարահանվել է «Ժամանեցին երեք հրեշտակ-

նոր» ևրաժշտական կատակերգության մեջ: Ազնաուրը պատրաստվում է գլխավոր դերը կատարել «Փնտրեցեք կառքը» կինոնկարում, որտեղ պետք է հանդես գա նաև ֆրանսահայ երգչուհի Սիլվի Վարդանյան: Բացի այդ, Ազնաուրը գլխավոր դերակատարն է լինելու նաև Խալիլյանի նկարահանվող «Բարձր անհավատարմություն» ֆիլմում: 1964 թ. Ազնաուրը կլինի Տոկիոյում՝ մասնակցելու համար օլիմպիական խաղերի ժամանակ կազմակերպվող երգահանդեսներին:

(«Նոր կյանք», Բուխարեստ)

* * *

Հոկտեմբերի վերջերին Փարիզի «Օթել Մոդեռնի» սրահներում բացվել է Ֆրանսիայում ստեղծագործող հայ նկարիչների մի մեծ ցուցահանդես, որին մասնակցել են մոտ 40 արվեստագետներ: Ֆրանսահայ նկարիչները որոշել են, ցուցահանդեսը փակվելուց հետո, յուրաքանչյուրը մեկ կամ մի քանի գործ ուղարկել Երեւանի պետական պատկերասրահին: Հանազան պատճառներով ցուցահանդեսին չմասնակցած մի շարք անվանի հայ նկարիչներ ևս որոշել են իրենց նկարները ուղարկել Հայաստան:

(«Աշխարհ», Փարիզ)

* * *

Փարիզի «Էր մոնտ Սուվերեն» («Ընդերկրայա աշխարհ») հրատարակչությունը ֆրանսերեն լեզվով լույս է ընծայել ճարտարապետ էդուարդ Մուսոնյանի «Մասնագիտական ուղևորություն դեպի Հայաստան» գիրքը, որն ընդգրկում է հարցերի լայն շրջանակ: Գրքի զանազան զբոսայգիները վերաբերում են հայ ժողովրդի պատմության տարբեր հարցերին, Հայաստանի աշխարհագրությանը, մշակույթին, ճարտարապետությանը: Գրքում զետեղված են 230 լուսանկար, 45 քարտեզ և ճարտարապետական կառույցների հատակագծեր:

(«Զարթոնք», Բեյրութ)

* * *

Երկու ֆրանսահայերի՝ հուշակավոր բեմադրող Հանրի Վերնյոյի (Աշոտ Մալաքյան) և սցենարիստ, ակադեմիկոս Հանրի Բուռայայի (Լ. Թորոսյան) մասնակցությամբ ստեղծվել է «Մեծ գողը» ֆիլմը, որի նյութը վերցված է Օ. Հենրիի ստեղծագործությունից: Ֆիլմի մեջ գլխավոր դերը կատարում է հուշակավոր դերասան Ֆերնանդելը:

(«Զարթոնք», Բեյրութ)

* * *

Ֆրանսահայ «Հայագիտական ուսմանց կենտրոն»-ը կազմակերպեց հանդես՝ նվիրված հայ հին մշակույթին: Հանդեսին մասնակցելու համար Լիոնից, Մարսելից, Վիեննայից և այլ վայրերից Փարիզ ժամանած երիտասարդ հայադեմոստրները հաղորդումներ արեցին IV—V դարերի հայ պատմության կարևոր դեպքերի ու դեմքերի մասին: Կարդացվեցին «Մեսրոպ Մաշտոցի ժամանակ քաղաքակիրթ ազգերի մակարդակը», «Ազաթանգեղոս, Եզնիկ Կողբացի, Մովսես Խորենացի», «Բաղդատություն Եղիշի, Ղազար Փարպեցիի և Փավստոս Բուզանդի», «Հայ մշակույթը և ճարտարապետությունը աշխարհի մեջ» զեկուցումները:

(«Աշխարհ», Փարիզ)

Ա Մ Ն

Լույս է տեսել Նյու-Բրունսվիքի համալսարանի պրոֆեսոր, բյուզանդագետ Փիթեր Խարանիսի «Հայերը բյուզանդական կայսրության մեջ» ուսումնասիրությունը: Այն նախօրոք հրատարակել էր Պրագայի «Բյուզանդիկոսլավիկա» մասնագիտական հանդեսը: «Հանդես»-ը 1964 թ. հայերեն թարգմանությունում հրապարակելու է այդ գործը: Գրքի առաջաբանում հայտնի հայագետ Սիրափի Տեր-Ներսեսյանը գրում է. «Բյուզանդական կայսրության մեջ հայոց դերին այս խոճամիտ և անկողմնակալ գնահատումին մեջ պրոֆ. Խարանիս հիմը դրած է ավելի նոր հետազոտության և մեզի տված է բյուզանդական ազգագրության մասին իր բազմաթիվ մեծարժեք ուսումնասիրություններում ամենեն կարևորը»:

(«Աշխարհ», Փարիզ)

* * *

Շվեյցարիայի հանրաժանոթ հայագետ պրոֆ. Ռոբեր Կոտելը, որը ժնևի համալսարանի լատիններենի գլխավոր դասախոսն է, Միացյալ Նահանգների Հարվարդի համալսարանի կողմից հրավիրվել է 1964 թ. փետրվար-հունիս ամիսներին դասախոսություններ կարդալու հայերեն բնական թերականության և հայ գրականության հարցերի շուրջ:

(«Աշխարհ», Փարիզ)

* * *

Նյու-Յորքի հայերը ընդունելություն են կազմակերպել հոկտեմբեր ամսին ԱՄՆ-ի գիտությունների ակադեմիայի 100-ամյակին նվիր-

ված հանդեսներին մասնակցելու համար հրավիրված ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանի պատվին, որին մասնակցել են բազմաթիվ հայ գիտնականներ, արվեստագետներ, գրողներ և հեղուներությունը վարել է Պենսիլվանիայի համալսարանի պրոֆեսոր Մանաս Սեակը: Պրոֆեսորներ Վ. Բարսեղյանը, Ա. Բաղդասարյանը, նկարչուհի Վալա Խաչատրյանը և ուրիշներ ջերմորեն ոգջունել են հյուրին: Վերջում բազմաթիվ ներկաներ մեծ ուշադրությամբ ունկնդրել են Վ. Համբարձումյանի ելույթը նվիրված հայրենիքի նվաճումներին:

(«Երիտասարդ Հայաստան», Նյու-Յորք)

* * *

Իստ Փալմուտում բացվել է մի դպրոց հայագրի երկսեռ աշակերտների համար, նպատակ ունենալով հայոց լեզու, պատմություն և երաժշտություն ուսուցանել ամերիկահայ երիտասարդներին: Ուսուցումը կատարվում է ամռան ամիսներին: Դպրոցում գասավանդելու են հրավիրվել ուսուցիչներ Նյու-Յորքից, Ստամբուլից և Բեյրութից:

(«Արարատ», Բեյրութ)

* * *

Ամերիկայում 21 տարի շարունակ լույս տեսնող «Պայքար» տարեգիրքը անցյալ տարի վեր է ածվել «Գրականության և արվեստներու» եռամսյա հանդեսի համագործակցության դիմել է սփյուռքահայ մշակույթի գործիչներին՝ ավելի գործոն մասնակցություն բերելու նրա աշխատանքներին: Առաջին համարում հանդես են եկել ճանաչված գրողներ Ա. Անդրեասյանը, Բ. Նուրիկյանը, Կ. Սիտալը, Մ. Աթմաճյանը և շատ ուրիշներ: Տպագրվել են Ս. Կապուտիկյանի, Վ. Նորենցի և մի շարք սովետական ռուս բանաստեղծների գործերը: Հանդեսի բանասիրական բաժնում տեղ են գտել Հրանտ Արմենի «Մուշեղ Մամիկոնյան» և Զորայր Միրզայանի «Վերածնունդը Առաջավոր արևելքում» հոդվածները: Հանդեսը տպագրել է հայկական թեմաներով այն նամականիշների լուսանկարները, որոնք տարբեր ժամանակներում գործառնության մեջ են դրվել Սովետական Միությունում: Լույս է տեսել նաև հանդեսի երկրորդ համարը:

(«Պայքար», Բոստոն)

* * *

Սի խումբ երիտասարդ ամերիկահայերի նախաձեռնությամբ Կալիֆորնիայում ստեղծվել է «Հայք» կինոընկերությունը: Ընկերությունը միայն հայերի մասնակցությամբ նկարահանել է «Արյունապարտը» ֆիլմը: Երաժշտության համար օգտագործվել են հատվածներ Կոմիտասի, Ա. Խաչատրյանի և Հայմի Մենդոսա նավայի ստեղծագործություններից:

(«Նոր օր», Ֆրեզնո)

* * *

Դետրոյտի Ուեյն համալսարանի տեղեկատու տարեգրքից հայտնի է դարձել, որ այդ համալսարանում 1963—64 ուսումնական տարում եւ շարունակվելու են հայոց լեզվին, պատմությանը և մշակույթին վերաբերող գասախոսությունները, որոնք կարդալու է Բյուզանդ Ռուբյանը: 10 տարվա ընթացքում այդ դասախոսություններն ունկնդրել են մեծ թվով ուսանողներ: Այսուհետև նման դասախոսություններ պետք է տեղի ունենան առանց ընդհատումների: Տեղի հայությունը նյութական և բարոյական մեծ օգնություն է ցույց տալիս այդ գործին:

(«Լրաբեր», Նյու-Յորք)

* * *

Նյու-Յորքում հայ մշակույթի տոնի առթիվ տեղի ունեցավ մեծ համերգ՝ մասնակցությամբ «Կոմիտաս» և «Պերպերյան» երգչախմբերի և քսանհինգ հոգուց բաղկացած նվագախմբի: Համերգը ղեկավարում էր սփյուռքահայ անվանի կոմպոզիտոր-խմբավար Համբարձում Բերբերյանը, որի ստեղծագործություններից էլ կազմված էր հայտագիրը: Կատարվեցին «Խոսքիմ որդուն» (Ս. Կապուտիկյանի խոսքերով), «Ոսկի երազ», «Հայաստանի գովեր» (Ըստ Զորենցի) և այլ բազմաթիվ երգեր, «Խորհուրդ Վարդանանց» կանտատան, հատվածներ «Արեգ-նազան» օպերայից: Թավջութակի կոնցերտը, որն առաջին անգամ էր կատարվում ԱՄՆ-ում, նվագեց կոմպոզիտորի որդին՝ Վահե Բերբերյանը:

(«Լրաբեր», Նյու-Յորք)

* * *

Ջորջթաունի համալսարանում ստեղծվել է արևելյան լեզուների ամբիոն: Պարսկերենից և թուրքերենից բացի, համալսարանում պետք է դասավանդվի նաև հայոց լեզու:

(«Արև», Կահիրե):

Միացյալ Աւարական Ռեսպուբլիկա

Կահիրեի հայկական ընթերցասրահի վարչության նախաձեռնությամբ տեղի են ունենում գասախոսություններ՝ նվիրված հայ մշակույթի զանազան հարցերին: Դասախոսությունների նոր տարեշրջանի առաջին թեման նվիրված էր հայկական օպերայի ծագման ու զարգացման հարցերին: Դասախոսեց կոմպոզիտոր էզվարդ Հսկորյանը: Վերջում ներկաները ունենդրեցին հետաքննարկումներ հայկական օպերաներից:

(«Ջահակիր», Կահիրե)

* * *

Փրկարատե ընդմիջումից հետո Կահիրեում ավսեց վերահրատարակվել «Ջահակիր» առաջագիմական շաբաթաթերթը: Ինչպես գրված է առաջին համարի խմբագրականում, թերթի նախատակն է «մշտավառ պահել հայ մշակույթի ջահը արտասահմանի մեջ, դառնալ փրկարար կամուրջ Մայր-Հայրենիքի և Հայ-Սփյուռքի միջև...»:

(«Ջահակիր», Կահիրե)

* * *

Կահիրեում առանձին ղրրով լույս է տեսել անվանի ծաղրանկարիչ Ա. Սարուխանի «Մենք հայերեն չենք գիտեր» երգիծական պիեսը: Երեք գործողությամբ այդ կատակերգությունը պատկերում է սփյուռքահայ կյանքը: Գիրքը նկարագարող է հեղինակը:

(«Արև», Կահիրե)

Իրան

«Իրանահայ գրողների միության» ջանքերով հրատարակության է պատրաստվել «Իրանահայ արդի գրողներ» ժողովածուի առաջին հատորը, ուր տեղ են գտել 40 գրողների ինքնուրույն գործերը: Որոշված է գրքի երկրորդ հատորը նվիրել իրանահայ թարգմանիչների գործերին:

(«Էրարեր», Նյու-Յորք)

* * *

Թավրիզում տեղի է ունեցել երգչուհի Հասմիկ Սաֆարյանի մենահամերգը, որի ժամանակ նա կատարել է հայկական երգեր: Նույն տեղում կայացել է Հուսիկ Բուդաղյանի ղեկավարած պարային դպրոցի սաների համերգը: Սաները վարպետությամբ են կատարել «Կինտոների խնձույթը» և այլ պարեր: Թեհրանում հյուրախաղերով հանդես է եկել Բեյրութի «Գասպար Իփեկյան» թատերախումբը: Մշակութային կյանքով է ապրում նաև Նոր Զուղայի հայ համայնքը: Այնտեղ գործող «Կարա-Մուրադ» երգչախումբը վերջերս համերգ է տվել Նոր Զուղայացիներն ունեն նաև իրենց թատերախումբը: Որը բեմադրել է «Շեղվածները» պիեսը:

(«Արև», Կահիրե)

Վ. ԵՐԿԱՆՅԱՆ